

## ԱՅՀՈՒՄԻ ՇԵՄՔՈՒՄ

«Թանի դեռ փայլում է արևն երկնքում. ամենա-  
ցած մեղաւըն իսկ կարող է դառնալ եւ զղչալ։  
Դ. Թօրօ

Երկար բացակայութիւնից յետոյ նոր էի վերադարձնել իմ  
ծննդավայրը։ Օտարութեան ցրտութիւնը, պաղը հալուել էր  
հոգուս վրայից։ Ծնողական տան յարկի տակ անցուցածս  
մանկութեան օրերի խաղաղ անգորը քունը նորից այցելութեան  
էր եկել ինձ, երկար պանդխտութեան անքուն գիշերներից,  
կարօտանմաշ ցերեկներից յետոյ։ Աչքս բացի անկողնում.  
փոքրիկ գեղջկական սենեակս ողողուածէր լուսանուտներիցը ներս  
թափուող լուսով։ Արեն երկու մարդաբօյ բարձրացել էր։ Աշխա-  
տանքի գնացած եղբայրներիս սովորական աղմուկը, սայլերի  
պատրաստութիւնը, շների հաշոցը, գիշերապահների սովորական  
«էհէնէյը», գետակի լսոխոջը, ոչ մէկն այդ գիշեր ինձ չէր  
խանգարել ես ընկլմուած հմ եղել այդ առաջին գիշերը պան-  
դխտութիւնից յետոյ խոր, երանաւէս քնի մէջ։ Առաւուեան  
պէս թարս ու աշխոյժ գգացի ինձ։ Յիշողութիւնս սկսեց իւր  
շղթայի համար նոր օդակ հիւսել և կապել վերջինին։ իսկ  
վերջինը ընելուց առաջ մօրս համբոյրն էր։ Նա անկողին դրաւ  
ինձ ինչպէս իւր վաղեմի երեխային, նստաւ անկողնիս վրայ, իմ  
մանկութիւնից բաներ պատմեց։ Այդ պատմուածքն ինձ համար  
անուշ ընարեր օրօր էր։ Երբ նա նկատեց թէ աչքերս «թառում  
են», ծածկեց, խաչակնեց ու մի պինդ համբոյր թողնելով ճա-  
կատիս, յուշիկ բայլերո՞ւ դուրս գնաց։  
Ո՞չ մի համբոյր լաւ մօր համբոյրին հաւասարուել չի կա-

բող։  
Եւ ելք անդորր քնից յետոյ աչքս բացի, առաջին բանը  
որ միտքս եկաւ՝ այդ վերադարձած խաղաղ քունն էր ու մօրս  
համբոյրը։

«Արդեօք այս զուարթացուցիչ քունը, որ վաղուց աչքերի-  
ցըս փախած էր, մօրս կախարդիչ համբոյրի ուրդւմքը չէր'»,

մտածում էի ինքսինձ անկողնումը պառկած: Հարցիս պատասխան դեռ չէի պատրաստել, երբ հայրս ներս մտաւ: Է՛, որդի, այսօր քեզ ներում եմ, նորեկ ես և յոդնած. բայց մեր տան կարգն ու կանոնը միտք բեր: Էլ այսքան ուշ չվեր կենաս: Ժամի կոյնակն երբ մեր կտուրը հասնի, մերոնք բոլորն էլ պիտի վերկացած և գործի կեցած լինին, քաղցրութեամբ և հանաքով նկատեց հայրս:

— Հայր, եղբայրներս գործ ունին, պարտաւոր են վեր կենալ. ես ին'չ գործ ունիս, որ այդպէս շուտ վեր կենամ:

— Դու մի շատ սրբազն պարտք ունիս կատարելու, որդի, և պիտի կատարես առանց յետաձգելու, փութով, հէսց այսօր: Զիերը թամբած պատրաստ են: Եղբայրներիցդ մէկն էլ հետդ կ'գայ:

Ես զարմացած նայում էի հօրս, որի կերպարանքը լրջութիւն ստացաւ իւր այդ պատգամը տալիս:

Ի՞նչ «սրբազն պարտք», ինչ «թամբած ձիեր». մւրէ զրկում ինձ հայրս այսպէս անժամանակի ես դեռ իմ սիրած սար ու ձորը չեմ չափչփել, դեռ դաշտերից ծաղիկ չեմ փնջել, դեռ «լուս աղբիւրի» անմահական ջրով չեմ զովացել: Այս մւր է զրկում ինձ հայրս, տարակուսանքով մտածում էի ես, առանց պատասխան գտնելու:

— Հայր, չեմ հասկանում թէ ուրես զրկում ինձ:

— Այս բոպէիս ասեմ: Սուրբ Լուսաւորիչ վանքի սուրբ վանահօր փոխանորդը, ինչպէս գիտես, մեր երկրի Սև-աղբիւր գիւղիցն է: Վեց ամիս է որ նա թողել է վանքը և եկել գիւղում է ապրում ու օրաւուր սպասում է մահուան: Բժշկից, գեղ ու գարմանից յոյսը կըտել է և ուզում է իւր վերջին շունչը հայրենի հողի վրայ տալ, իւր սիրելիների զրկումը հանգչել: Ես անցեալ օրը նրան տեսնելու գնացի: Բաղդ ունեցայ հիւանդ սրբազն տիրոջ անկողնի մօտ ծունկ չոքել, համբուրել աջը և նրա օրհնութիւնն ստանալ, երբ ես գուրս պիտի գայի, նա ինձ վրայ այս պարտքը դրեց երդումով: Նա լսել էր որ դու ճանապարհ ես ընկել դէպի հայրենիք և ինդրեց որ անմիջապէս քեզ իւր մօտը զրկեմ անպատճառ: «Մրտիս վրայ ծանրութիւն կայ, ասաւ նա: Ես ուզում եմ ձեզ որդու առաջը գլորեմ այդ ծանրութիւնը, քանի չեմ մեռել»: Այժմ իմացմը որդի, թէ ինչու պիտի անպատճառ այսօր գնաս: Մահը սպասող հնազանդ ծառայ չէ: իսկ մահամերձ հիւանդի կամքը չկատարելը յանցանք եմ համարում, կրօնական երկիւղածութեամբ և Աղջութեամբ վերջացրեց հայրս:

Հօրս պատկառանքով վերաբերմունքը՝ դէպի իւր հոգեորտէ տէրերից մէկը՝ ինձ վրայ խոր տպաւորութիւն արաւ ես վճռեցի գի գնալ տեսնել հիւանդ սրբազն հօրը, որով և մեծ հաճոյք պատճառած լիինէի հօրս: Կէս ժամ յետոյ ես ու եղբայրս ձիերը հեծած մեր բակից դուրս եկանք Սև—աղբիւր գնալու:

— Զմոռանաք, որդիք, ինդրեցէք որ սուրբ հայրը ձեզ օրհնի. ծունկ չոգեցէք առաջ... ետևիցս լսեցի մօրս ձայնը, որի շարունակութիւնը ականջիս չհասաւ, գետակի ձայնիցը խլանալով:

Մենք գնում էինք արծաթփրփուր գետակի ափով: Նրադուրեկան խոխոջը սրնպի թովչութիւն ունէր ինձ համար: Մանկութիւնից իմ ականջս վարժ էր այդ ձայնին: Մեր չորս կողմը երփներանգ ծաղիկների դաշտեր էին փոռուած, որոնց տեսքը աչքս, իսկ բուրմունքը հոտոտելիքս էին պարարում: Գնում էինք շարունակ դէպի արևելք, Գնում էինք անոյշ խօսք ու զրոյցով: Մի ժամից յետոյ գետակիցը ջոկուելով Ռև—ժամագիւղի դաշտակին ելանք: Էլի մի ժամ և լանկարծ մեր առաջն եկաւ մի անդնդախոր ձոր, որի միջով մարմանդ ընթացքով գետն էր սողում: Գետի աջ ափին՝ բարձրադիր ժայռու պատուանդանի վրայ ցայսօր կանգնած է գետ հին Հայոց հաւատի վկայ հրաշակերտ վանքերից մէկի կիսաւեր շէնքը: Իջանք, համբուրեցինք փառազուրկ վանքը և գետն անցնելով ձորիցը ելանք ու Ռև—աղբիւրի դաշտակը մտանք: Արդէն մեր առաջն էր դիւղը, մի բարձրաւանդակի վրայ տարածուած:

Գիւղի ետևում աջ կողմից՝ կանգնած է կանոնաւոր բրդածներ, կենդրոնում բարձրանում էին նորաշէն եկեղեցու պատերը, սև, սրբատաշ քարից: Եղբայրս բացադրեց որ այդ եկեղեցին հիւանդ սրբազնն է նորոգում իւր յիշատակին: Արեմատեան ծայրից մտնելով կարեցինք անցանք գիւղը: Եղերքին մօտիկ՝ պատահեցինք Սև աղբիւրին, որից առնուած է գիւղի անոնքը: Մի փոքրիկ աւազան, որից առատօրէն հոսում է աղբիւրի ջուրը: Նրա առջև դրուած են նաւեր անսառներին ջրելու համար: Մի փոքր էլ յառաջ գնալով գրեթէ գիւղից դուրս ելանք: Մեր առջևը հանդէս եկաւ սրբատաշ քարով կերտուած մի սիրուն նորաշէն տուն: Այդ տեղ էր ապրում սրբազնը: Շէնքը կազմուած էր երեք մեծ սենեկից, որոնք բացում էին միջանցքի մէջ: Արևելեան ընդարձակը՝ դահլիճ էր հարաւի սենեակը՝ որի լուսամուտները անտառու սարին էին նայում, սրբազն հիւանդի ննջարանն էր.. հանդիպակաց սե-

Նեակը, որ իւր լուսամուտներով դէպի հիւսիս էր դարձած,  
հիւրերի էր յատկացրած։ Շէնքը գեռ կատարելապէս աւար-  
տուած չէր, թէ բնակելի Սակայն յատակի և լուսամուտների  
վրայ թանձր նստած փոշին, սեղանների և աթոռների կեղտը  
ցոյց էին տալիս որ տէրը հիւսնդ է և անզօր մաքրութիւն  
պահելու տան մէջ, իսկ աղջականները զուրկ են մաքրութեան  
հասկացողութիւնից և անհոգ։

Եղբօրս առաջարկութեամբ իջանք ձիերից։ Մեզ մօտեցաւ  
մի յաղթանդամ թխադէմ անձնաւորութիւն երկար «անթարի»  
հագած թանդ կտորից, բայց կեղտոտ, մէջքին դիպակեայ ասդ-  
նեգործ գօտի, նոյնպէս կեղտոտ բծերով։ Գլուխը կապած էր  
մի կեղտոտ թաշկինակով, նա օրօրուելով դայթ ի դայթ մօ-  
տեցաւ մեզ։

—Եղբայր, մէվ է սա, հարցըրի ես.

—Սրբազնի եղբօրորդին, քահանայ է, Տէր Պարրիէլը։  
Սա գիշեր ցերեկ հարբում է. այժմ էլ հարրած է։

Այդ ժամանակ մօտեցաւ ինձ քահանան շաղուած աշքե-  
րով նայեց երեսիս, ապա գլուխն աջ ու ձախ թափ տալով ինքն  
իրեն խօսեց բարձրածայն։ «Զէ, չեմ ճանաչում» և դարձաւ եղ-  
բօրս։

—Օրհնեա ի Տէր, տէր հայր, սա եղբայրս է։

—Հա, դիմեց ինձ տէր հայրը կապ ընկած լեզուով, նե-  
րողութիւն չճանաչեցի, խոստովանանք պահես մի ըի՞... չ էն-  
թավուր եմ էլեւ ապա կանչեց իւրայիններից մէկին, պատուի  
ըելով որ մեր ձիերը ներս տանեն։

—Տէրտէր ջան, խնդրեմ հրաման անես ձիերին մի քիչ  
ուտելիք տան, ասաց եղբայրս ձիու գաւակիցը փոքրիկ խուր-  
դինը վար առնելիս։

—Դու յառաջ էս ասսա, բարեկամ, էդ խուրջուդ մէջը  
սրանից կմյ, փոքր ինչ ձայնը ցածացնելով և աջ ձեռքի մա-  
տերին բաժակի ձև տալով ու շրթունքներին մօտեցնելով, հարց-  
ըց քահանան։

—Այդ հեշտ է, կգտնուի, տէր հայր, միայն թէ զու հրա-  
մայիր կերակրեն ձիերին։

—Թէ որ էդպէս է ամէն մի ձին էսօր մի խուրձ առ-  
վոտ և կէս լիտր գարի կուտի, ուրախազած ու կարկամելով  
խոստումն արաւ տէր հայրը։

—Եղբայր, միթէ խուրջինումդ ողի կայ։

—Ո՞չ, եղբայր, ես սրա սովորութիւնը գիտեմ. հիւր ե-  
կողը եթէ հետը արաղ չունենայ, սա ոչ սիրով կընդունի և ոչ

ձիերին կկերակրի, ուստի մի փոքր խորամանկութիւն բանեցրի, երկդիմի պատասխան տալով:

—Տէր հայր, կարմաղ եմ սրբազն հօրը ներկայանալ, հարցուի ես, որտեղ է այժմ:

—Հան, սրբազնին ես ուզում տեսնել. լաւ: Բայց գիտեմ, սրբազնը էլ յառաջուանը չի: Գրպանումը փող չկալ, վրէն էլ առողջութիւն. էլ ինչ սրբազն: Տնաշէնը վեց ամիս է գիշեր ցերեկ աշխատում է մեռնել ու չի կարողանում, որինքն էլ ազատուի, մենք էլ, որ...

—Լոիր, ապերախտ, այդպէս չեն խօսում բարերար հօրեղոր վրայ, խիստ զայրացած գոռացի ես. ինձ միայն ցոյց տուր թէ ուր է սրբազն Տէրը և քաշուիր այստեղից:

Իմ յանկարծակի բռնկումը իւր ազդեցութիւնն ունեցաւ արբած քահանայի վրայ. նա մատով ցոյց տուաւ ինձ բաց դուռը, որ տանում էր դէպի փոքրիկ պարտէզը:

—Ա՞-, եկ, եկ, օրհնեալ լինիս, բարի եկար, այստեղ եմ, այստեղ. եկ, սիրելի, եկ մարմնոյս ու հոգուս աւերակը տեսայստեղ եմ, այստեղ, ծանր տնքոցով ու ընդհատ-ընդհատ ձայնով կանչեց ինձ պարտիզից ինքը սրբազնը:

Նա լսել էր իմ վերջին զայրագին խօսքերս քահանային ուղղուած:

Ես մտայ պարտէզը: Շէնքի արևելեան կողմում մի փոքրիկ դաշտակ էր դա, ձորակի ափին, մի քանի ծառերով: Հիւանդը նստած էր մի քարի վրայ, մէջքը յենած ծառերից մէկին: Կուրճքը բաց էր, ոտները բորբէկ և սաստիկ ուռած: Հրուկայ հասակը երկտակ ծալուած՝ գրեթէ ընկած էր այդ ծառի տակին: Արծուէ քթով զարդարուած շիկաւուն մաքուր դէմքը առաջուայ նրոխտութիւնը չունէր: Խաժ աշքերի մէջ յուսահատութիւնն էր կոխել: Շըթունքներիցն հոգոցն ու անքոցն անպակաս էր: Զրգողը դանդաղ ու դաժան կերպով տանջում էր նրան:

«Ե՞կ, եկ ու տես իմ թշուառութիւնը. «Կորիցէ օրն յորում ես ծնայ և գիշերն յորում ասացին թէ ահա արու. անիծեալ լիցի օրն այն և գիշերն և տարցի զնա խաւար: Բայց երանիթէ միայն Յորի մարմնական տանջանքն ունենայի: Հոգիս առաւել հիւանդ, առաւել խոցաւէտ, առաւել շարաւալից է: Թշշուառութեան յարկը մտար. քո շնորհաբեր ոտքերդ անիծից տունը կոխեցին: Անարգ ապերախտութիւնն ընդառաջ ելաւ քեզ այս տան շէմքում. ես լսեցի քո զայրոյթը իմ կրծքին վրա և շեռուցած օձի ձագի դէմ: Բայց «Ես տեսի անզգամաց վրա և շեռուցած օձի ձագի դէմ: Բայց «Ես տեսի անզգամաց

արմատս ձգեալ, այլ վաղվաղակի հարան յարկը նոցա. հեռի լիցին որդիք նոցա ի փրկութենէ, կողկողեսցին առ դրունս վատթարաց և ոչ ոք իցէ որ փրկիցէ»: Ահա այս տան համար էլ է տառապող ծորի այս անսուս պատգամը:

Ես համբուրել էի սրբազն հօր աջը և նրա առջևը կանգ նել, երբ նա բորբոքուած հոգով խօսում էր:

— Սրբազն տէր, խնդրում եմ անդորր պահէք ձեզ, տէր հայրը մի փոքր գինով էր: Ես սխալ արի որ նշանակութիւն տուի նրա խօսքին. անշուշտ նա իւր սրտում երախտագէտ է դէպի ձեզ:

— Ե՞ս, որդի, դրա վրայ չէ միայն սրտնեղութիւնս: Իմ տանջանքներին ծովումը իմ հարազաների ապերախտութիւնը լոկ մի կաթիլ է, զիս խածատող օձերի վիրապումը՝ լոկ մի ճանճ: Միայն այդ չէ իմ ցաւս: Նստիր որդի, մի փոքր նստենք այստեղ, այս կապուտակ երկինքը, այս սիրուն լեռները, այս խնկարոյը դաշտերը դիտելու: Շուտով զիս խաւար գերեզմանը պիտի ծածկէ ու աչքերս ընդ միշտ պիտի գոցուին այս տիրակերտ հրաշալի բնութեան առաջ:

— Ես չեմ տեսնում թէ ձեր տկարութիւնը յուսահատեցնելու չափ ծանր լինի, սրբազն տէր, փառք Աստուծոյ Դուռը լաւ էր և յուսամ թէ շուտով կառողջանաք մեր երկրի հրաշալի ողի մէջ, ջանացի սիրու տալ ես:

Մի գառն ժափա ծռմռեց ծերունու շրթունքները,

— Զէ, որդի, հոգիս ու մարմինս միանուագ երաշտ տարիների գաշտերն են ներկայացնում: Պատառուտուած, բնկրեկուած են նրանք. անդունդներ են բացուել նրանցում և այժմ միիթարութեան, քաջալերութեան անուշ խօսքը իմ հոգուս համար նոյնն է, ինչոր ուշացած անձրւը հողի մէջ չորցած ու ցամքած ցորենի հատիկների վրայ: Միիթարորթեան ոչ մի գետ, քաջալերութեան ոչ մի ծով չի կարող այլ ևս իմ բնկրեկուած էութեանս անդունդները լցնել և ոչ յուսոյ մի ծիլ անեցնել այնտեղ...

«Անհունի շէմքումն եմ կանգնած: Ո՞հ, անհունի շէմք, որպիսի սայրասուր փշերով ես ցանուած դու յանցաւոր հոգու առաջ: Թո դռնիցդ ներս նայելով մեղսակիր հոգին իւր անցած ճանապարհն է տեսնում, իւր կեանքի ճանապարհը, որի երկու ափերին շարուած են առիւններ, գայլեր, յարալէզներ, գիշակեր թռչուններ, թունաւոր օձեր, խայթող մժեղներ, արնեխում ազբուկներ և դու այդ ճանապարհը պիտի մտնես, յանցաւոր հոգի: Եւ գիտես մյը են, որդի, այդ ահուելի հրէշները

դարձաւ նա դէպի ինձ, որոնք յանցաւորին տանջելու կազմ  
և պատրաստ կեցած են յաւիտենականի տիրոջ հրամանով:  
Դոքա նրա գործերն են. գործեր, որոնք յաւիտենականի շեմ-  
բում հրէշակերպ արձանացան: Ահա, որդի, այժմ այդ սոսկալի  
ճանապարհի սկզբում, անհունի շէմքումն եմ կանգնած ու դո-  
ղում ամրողղութեամբ:

—Բայց ես կարծում եմ, սըրազան հայր, եթէ Աստուած  
մի արացցէ, կեանքի և մահու Տէրը ձեզ իւր մօտը հրաւիրելու  
լինի, յարութեան յուսով խնդացէք և անդորրը հոգով նրան անձ-  
նատուր եղէք, որ վաստակեալներին և բեռնաւորներին իւր  
մօտ կոչելով հանգիստ է խոստանում:

Այդ ուղիղ է, որդի. բայց այդ հանգիստը նա իւր պա-  
տուիրան պահողներին է պահել, որոնք առաքինական գործե-  
րի ծանր բեռները շալակած յարու թեան յուսով դէպի անհու-  
նի շէմբն են դիմում ու համարձակ աչքերով են նայում մա-  
հուան դաժան աչքերի մէջ: Խսկ ես իմ կենաց մշակած դաշ-  
տերից լինչ նուէր եմ տանում Տիրոջ: Ի՞նչ են իմ բեռներս.  
ոչ հաւատի խունկ, ոչ յուսոյ թարմ ծաղիկ, ոչ սիրոյ անթա-  
ռամ վարդ, ոչ բարի գործոց շողզող աղամանդ: Այլ լոկ ապե-  
րախտութեան սև թոյն, փառասիրութեան անշէջ կրակ, նա-  
խանձի գարշակու ներկ ատելութեան մշտավառ խարոյի, շա-  
հասիրութեան ժանդ արծաթ: Միթէ Տէրն այս բարիթների  
գոհը կընդունէ և ինձ հանգիստ կտայ: Միթէ ընդունեց Նա  
կայէնի գոհը, ընորհեց նրան: Հոգու անդորրութիւն: Եւ ես ա-  
հա գեռ շունչս բերանում վաղուց է, որ հաշիւ եմ տեսնում  
իմ սրտիս հետ, համարակարգում եմ գործերս և վաղուց է որ  
լսում եմ ի կենդանույն Տիրոջ ահեղ հրամանը. քնանէք զդա-  
ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճել ատամանցաւ:  
Եւ վեց ամիս է որ ես ընկղմուած եմ իմ հոգուս խաւարի մէջ,  
տանջում եմ անսփոփանք և կրճում ատամներս:

—Մըրբազն Տէր, որքան ինձ յայտնի է Զեր անցեալը,  
Դուք յարգական մի գիրք էք գրաւած եղել ձեր զինակից պաշ-  
տօնէից շարքում. ոչ ոք մի ծանր արատ զրած չէ ձեր վրայ:  
Եթէ մի վայրկեան ենթաղընք, որ Դուք իբր մարդ մի սկալ  
էք գործել, վասն զի ասուած է թէ. «Տվ իցէ մարդ որ ոչ մե-  
զիցէ», բաւական է որ Դուք զղման մաքրիչ հուր էք բորբոքել  
ձեր սրտում: Ես պատրաստ եմ այսօրնեթ վանք գնալ հրաւի-  
րել ձեր կարգակից կրօնաւորներից մէկն. խոստովանեցէք  
նրան և յուսացէք ներող ու բաւիչ բարի Քրիստոսի վրայ. նա  
ձեզ միանդամայն հոգու խաղաղութիւն կշնորհէ, ձեր զղման  
արտասունքով լուալով ձեր հոգու արաւը:

—Բարի, ազնիւ որդեակ, պէտք չէ կարգակից: Ես այդ մտքով եմ քեզ ինդրել ինձ մօտ: Դու իմ հայրենիքի հողի ու ջրի զաւակն ես: Ես կամեցայ որ դու իմ զղման, իմ մահամերձ տանջանքների վերջին և միակ վկան լինիս: Թող այս ջինջ երկնակամարը Աստուծոյ տաճարը լինի. այս սիրուն անտառազարդ սարը՝ տիրոջ սեղանը, ուր Նա աներևութապէս բազմի: Ես նրա ստորոտում անհունի շէմքում ծնկաչոք մեղաւորս, գուն վկայ այս աշխարհիս և Աստուծոյ առջե իմ տանջանաց, ու ես «Բանամ զջրթունս, բարբառիմ լեզուաւս, բողոքեմ զանձնէս» ու այս մանկութեանս օրօրան բնութիւնը թող «առիս նայելով ախտակից լինի»:

—Դէհ, լսէ, արդար ու անողոք Աստուծած, որ թագ կացար, թագ կացար, ապա անհունի շէմքումն իրրե ահեղ հաշուետես դատաւոր երևար ինձ: Ինչո՞ւ զղման քաջութիւն իւր ժամանակին չտուիր ինձ: Լսէ և Դու, որդեակ իմ, դարձաւ ինձ ծերունին:

Ես նստայ նրա դիմացը, դալարու թմրան վրայ ու զգացուած լարումով պատրաստուեցայ լսելու: Մերունին գլուխը կրծքի վրայ խոնարհեց, երկիցս հազար, մի քանի անգամ տընքաց, ապա մի երեք վայրիկեան աչքերը փակ գլխիկոր լսելուց յետոյ ուղղուեցաւ, ու հայեացը լերան կատարին սկսենելով այսպէս սկսեց:

—Ահա աչքիս յանդիման կանգնած է իւր բոլոր մանրամասնութեամբ մանկական օրերիս շողղողուն կեանքը. այն, անմեղութեամբ շողղողուն մանկութիւն: Մօա յիսուն ու չորս տարի յառաջ էր այդ, երբ տասնեւչորս դարնան անուշիկ զեփիւռ այս սրբազն լերան կատարիցը սահելով շոյել էր իմ դէմքը: 13—14 ամեայ փոքրիկ գառնարած մէի. այս լերան փեշերում, դաշտերի ծաղկավառ երեսին արածեցնում էր հօրս գառները Յեսուէի որդի գառնարած պատանի Դաւթի նման: Երբ շառագունած արևելքում հրդեն էր բորբոքում և արթնցած արեի արշաւանքն էր աւետում դէպի կապուտակ եթերը, բարի մայրս թօթուում էր անոյշ բունն արտեանունքներէս, հագնում ինձ իւր իսկ ձեռքերով կարած անպաճոյն հագուստս: Ապա նա երեսս մաքուր ջրով ցողելով սրբում էր իւր փէշով. կապում մէջքիս օրուայ պաշարիս «Հպիկը», դուրս հանում, ծագող արևի զիմացը կանգնեցնում ու խաչ հանել տալիս երեք անգամ. Ծղաս, ահա նայում է Աստուծոյ ամենատես աչքը, աղօթիր որ քեզ ու գառներդ անփորձ պահէ: Տես, այլոց կանաչ արտերի մէջ գառ չթողնես, նայում է տիրոջ աչքը: Ես

Առաջ ու երկրպահութեամբ խաչակնքում էի երեսս ու մօրս շրթունքներից երկու համբոյը քաղելով թարմ թշերիս վրայ, շաապում էր գառներս հանել ու ընկերներիս հետ միանալով դէպի լեռը գնալ:

«Ա»՝ և, մայր, ինչու ինձ հանեցիր քո գրկէն և ուրիշի դասաւարակութեան յանձնեցիլ: Արևածագին կը կնուող քո ամենօրեայ դասը հաւատի, սիրոյ ու բարութեան վրայ, որ առաւտեան ցողի նման իջնում էր իմ մանկական հոգու վրայ, էլ չկը կնուեցան քեզնից հեռու, այս սրանչելի բնութեան սրբազն ծոցից դուրս. նոյն իսկ այն տեղերում, ուր ամէն օր խընկան բուրմունքն էր բարձրանում առաւտից մինչ երեկոյ, ուր աղօթքների մրմունջն էր տարածւում սրբազն տաճարի կամարներու տակ...

«Սարի լանջին, դաշտերու մէջ, աղբիւրակների մօտ, ամենուրեք ես մօրս հաւատի, սիրոյ և բարութեան դասն էի լուում, Դեռ առաւտ է. ահա շաղ ու ցողով շողացող ծաղիկները իրենց գլուխները դէպի ծագող արևն են կախելի ես հաւատում էի թէ նրանք մօրս նման աղօթում ենն: Ես նայում էի թոթը-ուուն թևերով, հանդարտ ու բեկրեկ նուագով դէպի վեր ճախ-րող արտերու արտուտին ու մտածում էի «Ահա սա էլ իւր աղօթքն է բարձրացնում դէպի Աստուծոյ աթոռը: Միջօրէ է. գինարբն ու սարի սմբուլը, շուշանն ու աղբրանց արուն գլուխ գլխիւ. տուած ինչոր շնջում են իրար. ես յիշում էի այդ վայր-կենին մօրս սիրոյ համբոյրն իս երեսին: Իրանց բոյները թո-ղած երած երամ թոչունները դէպի դաշտերն էին սրանում կե բակուր ճարելու: Նրանք հետեւում էին մէկի, որ առաջնորդում էր: Ինձ թուում էր թէ այն առաջնորդը մի բարի, խելօք ա-րարած է, որ սիւս փոքրիկներին հատիկների վայրերն է ա-ռաջնորդում: Ես ինձ հասեմատում էի նրա հետ. ես էլ իմ սի-րուն գառնուկներս էի բերում արօտ: Ու հոգիս մի հպարտ գիտակցութեամբ լցուում էր թէ բարի դործ եմ անում: Այդ գիտակցութիւնը հաճելի էր դարձնում ինձ ծառայել ու օգտա-կար լինել գառնարած ընկերներիս և ընկերուհիներիս: Ցըւհւմ էին ինձնից առաւել փոքրի գառները, վազողն ու ժողովողն ես էի. Վիրաւորմաւ էր զորեղը տկարին, հարուստն աղբատին, մէջ տեղը կեցող և հզօրի դէմ սպառնական դիրք բունողը ես էի: Մէկն ու մէկը օրուայ բաւարար պաշարը չունէր, իս հայիկա նրա տրամադրութեան տակն էր, եւ երբ գառներն աղբեւրի ջրի վրայ բերելիս ջրում ու նստում էինք մարգար-տաթաւալ ական մօտ հոց ուտելու, երբ գառները մակաղած

մանրիկ մանրիկ որոճում էին, աղբիւրի խոխոջն իմ վարժունքներս քաջալերող անուշ ծիծաղ էր թուռում: ԶԵ որ աղբիւրն Աստուծոյ արցունքն է, նա միշտ ուրախ հոսում է, երբ Աստուած ծիծաղում է բարի գործերի վրայ. և նա հոսում է երբ Աստուած լալիս է չար գործերի վրայ:

«Այսպէս, ամեն տեղ Աստուած էր. բնութեան մէնմի շշուկ, խոխոջ, խաղաղութիւն, տեսարան, ամենայն տեղ Աստուած կար, որ սէր, հաւատ, բարութիւն էր քարոզում: Ու ես անսահման երջանիկ էի մօրս նման:

«Այլ աւաղ, ժամը հասաւ. ինձ մօրս զրկից ու Աստուծոյ այս խկական տաճարից հանելու բաժանման ժամը: Ինձ բըռնութեամբ կորզեց հայրս մէկի զրկէն ու միւսի ծոցէն ու վանք տարաւ, որ ուսում առնեմ ու՝ ինչպէս ինքն էր ասում, «մարդ» զամանամ:

«Ահա կեանքիս հեռանկարի ալս շողշողուն պատկերը հեռանում է: Աչքիս յանդիման է գալիս մի ուրիշը:

«Աշակերտ եմ. վանականի երկար շոր հազած, հողաթափեր ուսքերիս հետ քաշ տուող վանական աշակերտ: Էլ ոչ գեղջկական թեթեւ հագուստս կայ, էլ ոչ լեռ ու դաշտ, որոնց վրայ եղնիկի արագութեամբ վազվատէի. ոչ ծաղիկ՝ որ անվարձ անուշնոտութիւն բուրէր ինձ համար. ոչ դալարի՝ որ ինձ իւր փափուկ գիրկն ընդունէր հանգստանալու. ոչ ձոր, անտառ, քար ու թուփ, հեռաւոր հօրիզօն, անսահման երկինք, կենդանի ու թոչուն, որոնց հետ սիրաս խօսէր. ոչ մայր, որ ինձ սիրով գգուէր: Մի շուշան լեռնալանջից սաստիկ հողմով իւր ար մատիցը պոկուած ու մի մթին, անարև ու անանձք տեղ ընկած: Վանական գպրոցի մուայլ կեանք, հաստահիմն պարիսպներ, ճնշող կամաբներ, ինձ նման տիսուր ու դալիկացած միշտը պատահներ, անզորք ֆալախայ և դալար վարոցների փունջը կողքին շրտն ու դաժան լուռութեամբ նստած վանական վարժապես Ահա երկրորդ պատկերը կեանքիս:

«Թալաւայի և զերի ճնշումը ուսքերիս ու դալար վարչի ել և էջւ մալ ճիս փափուկ մսանների վրայ վանում են իմ իրծքից առաջուայ ընքորչ հոգին, որ նոյն իսկ դողում էր մի գառան, մի առ տանի թշուառութեան առաջ ու լցնում են իմ սիրաս ը: ատելութեամբ դէպի հարուածողը, հրամայուղը և դէպի այն ընկերները, որոնք ազատ են մնում հարուածից: Մի այլ անգամ ֆալախայի կրթիչ աղդեցութեան փորձը կատարուում է մի ուրիշ թշուառ պատանու վրայ, հոգեկան բաւականութիւն եմ զգում, որ իմ անարգանքիս մասնակիցներ

կան: Ուսուցիչը սիրում է մի լաւագոյն աշակերտի. իս' սիրնվ անուածս ու սիրազութեամ, անհուն ծարաւ եմ զգում փայփայանքի, ու նախանձի որդը սիրտս է մտնում թէ ինչպէս ուսուցչի փայփանքը փոխադրել տամ ինձ վրայ: Այս տեղից խաւար միտքս խաւար խոհեր է յղանում: Նախանձից սկսում եմ չարախօսել յառաջադէմ ընկերի վրայ: ստել, զրպարութիւններ յերիւրել և ընկերին հանել վարժապետի աշբից: Խսկ նրա տեղը բռնելու համար սկսում եմ շողոբորթել: Շողոբորթում եմ խօսքով, շարժուածքով և ի ժամու և ի տարաժամու, ու վանական վարժապետի աշքն եմ մտնում: Ո՞հ, որքան թանգ գնով եմ դուր դալիս վերջապէս խաւարասէր դաստիարակիս: Սիրտս ֆալախայի ամէնօրեայ համդիսից քարանում է: Առաջադէմ համարուելու նախանձու ձգումն ինձ փառասէր է դարձնում: Խսկ գիտես ինչ ասել է փառասիրութիւն: «Զկայ մի յանցագործութիւնն որ մարդ չկատարէր փառասիրութիւնից և վրէժխնդրութիւնից գրդուած» ասում է մի իմաստասէր: Մէկ խօսքով ես դառնում եմ սիրուց, հաւատից, բարոյքից թափուր մի ստախօս, զրաբան, շողոբորթ, մնափառ, եսական, անջիգեար երիտասարդ:

«Ահա այդ ժամանակ էր որ ես սերմնացան դառնալով, հոգուս ու հերկերում անօրէնութեանց սերմեր ցանեցի առատ ըռներով, որպէս զի ծերութեանս օրիրում առատ հունձ ու նենամ...»

«Անիծեալ օրեր, իս կեանքիս, իս առաքինութիւններիս սպանիչ զարուն: Քո թունաւոր շունչը ծերութեանս ձմբան մէջն եմ զգում.... Ահա քո հիւսած պսակն իս դազաղիս ու յիշատակիս վրայ...»

Ծերունու շնչառութիւնն արագացաւ: Սաստիկ յուզումը մի քանի վայրկեան կապեց նրա լեզուն: Նա լուռու մունջ նայեց երկնքին, հայեացքը լեռներու կատարը ձգեց ապա գրեթէ կանչեց յուզմունքից.

— Շունչ տնւր, Տէր, շունչ տնւր ինձ, ով Աստուած, իմ մանկութեան այս սրբար որորանում, այս սիրուն սարի ստորոտում ընկած խլխլեալ մարմնոյս, որ գէթ մի անդամ մի մեծ քաջութիւն գործեմ, զղջան կրակը՝ որ կրծքիս մէջ խարոյկ է դառել շրթունքներովս արտահանեմ, ամբողջ մարմինս ու հոգիս մէկն հրդեհեմ Քո առջնդ իբրև ողջակէզ ու մի փոքը մաքրուիս ախտեղութեսէն...

«Այսպէս, որդեակ, գպրոցական ուսումն աւարտելով՝ կրօնաւորի պճղնաւորը հագայ: Իս բարձրուղէշ մէջքը անվերջ վարժութիւններով ճկուն էր դարձել դեռ գպրոցում: Այդ իս

խոնտրհութեան, հեզութեան նշանն էր ։ Հեռուից երկում էին. ազդեցիկ եկեղեցականները, մէջքս ծալուում էր երկուտակ, դլուխս մինչև ծնկներս խոնարհուում, ապա շտկուելով՝ ձեռներս. կրծքին վրայ դրած, ծառայական պատրաստակամութեամբ սպասում էի որ հզօքներն անցնեն կամ մի համեղ խօսքով վարձագրեն խոնարհութիւնս. Ա՛խ, երանի թէ այդ սիրուն, վայելուչ շարժումները իմ սրտիս համապատասխան լինէին... Եւ շատ չանցաւ, երբ դեռ թարմ երիտասարդ՝ վանական բարձրագոյն ատենի դատաւոր կարգուեցաւ. Այսուհետեւ վմյ այն եկեղեցականին, թէկուզ իմ վաղեմի լաւագոյն ընկերին, որ զլանար ինձ դիրքիս պատշաճ յարգանքը տալ. Պաշտօններից զրկել տալ, խուլ վանքերումը փակել տալ, հացն ու դրամը կտրել տալ, այդ իս փէշակը դարձաւ. Առիթը շատ Զար ողին դրախտումն էլ գործելու մեղք կդանի:

«Բայց շունչս կտրուում է. ես չեմ կարողանայ սրտիս բուր խորշերը մանր ախտերից մաքրել, Հրէշաւորներին անցնեմ».

— Սիրելի, դարձաւ դէպի ինձ ծերունին, իւր խօսքի թեւ կտրելով. Սուրբ Գրքից և ազգերի պատմութիւնից ինչ յանցանքներ գիտես, որ բոլոր յանցանքներից ծանրագոյնը լինի, հրէշաւորը և աննմանը իւր տեսակաց մէջ:

Ես յանկարծակիր եկայ ու մի վայրկեան շփոթուած, լուռ մնալուց յետոյ շրթունքներիցս դուրս թուաւ.

— «Անկրօնութիւն»:

— Ո՞չ, որդիք. երկու սև յանցանք կայ որ իրենց նմանը չունին մեղեքերի հարուստ շտեմարանում: Այդ տիրադրժութիւնն է կամ տիրապանութիւնը, որ ապերախտութեան սեթոյն ունի իւր մէջ և մէկ էլ եղբայրատեցութիւնը, որ եղբայրասպանութեամբ է վերջանում: Առաջնի օրինակն է Յուդայի թունալից համբոյը հեղ Վարդապետին, երկրորդինը՝ անպարտ Արեկի մահը Կայէնի ապականուած ձեռքով: Շատ անգամ այս անտառին նայելով տեսնում եմ տիրադրութ Յուդային ծառից կախուած, փորոտիքը պատառուուած, որի վրայ գիշակեր ագռաւներն ու ուրուները ինձոյք են սարքել: Շատ անգամ սարի կատարով մտքամոլոր ու գլխին կռուփներ հանելով անցնելիս եմ տեսնում Կայէնին, եղջիւրներ հանած: Նա նստում է ու չի կարողանում, նա պառկում է ու տանջուում, նա թափառում է երերեալ և տատանեալ և նրա ետևից վազում է ստուերի նման Արէլի արնլուիկ անգուխ գիտակը, որ հալածում է եղբայրասպանին. Ես սարսափահար նայում եմնրանց: Զգուանք մի հայեացք են ձգում վրաս. կարծես նրանք ուզում են ա-

սել. «Միթէ չխրատուեցմը մեր տաժանակիր օրինակովը, թը-  
շուառական»...

— Սրբազն Տէր, մղկտալով գոչեցի ես հիւանդի թալկու-  
թիւնը տեսնելով, Դուք ինչժամ էք չափազանցութիւնների հրով-  
այրում ձեզ. Ի՞նչ նմանութիւն կարող է լինել Յուղայի, Կայէ-  
նի և ձեր մէջ, ի սէր Աստուծոյ հանգիստ եղէք:

— Հա, հա, հա, հա... դառն հեգնութեամբ ծիծաղեց հի-  
ւանդը: Ահաւասիկ, տես, որդի, իմ աչքովս մտիկ տուր, ահա-  
ահա տես ինչ տեսարան եկաւ դիմացս: Կուրացէք աչքեր, այդ  
խաղաղ դէմքը, այդ խորունկ հայեացը յանդիմանութեան կրակ  
է թափում վրաս ու լերդ ու թոքս խաշում: Եւ հիւանդը ջղա-  
ձգութիւններով կծկուեց ու աւելի սեղմ կպաւ ծառին մի ինչ  
որ երևակայական բանից սարսափահար:

«Ահա փոքրահասակ ծերունին, իմ բարերարս, գիշեր-  
ուան պահուն... անշունչ արձանացած: Լուսոյշող է իշել պայ-  
ծառ դէմքին: Ներքեսում մի մթին նկուղի մէջ ահա ուռուցցով  
լեռնացած ու լշացած, անվերջ տանջանքներով տազնապող  
ընկած է մի ուրիշը: Որդերը կըծում են նրա սրտի այն խորշերը,  
ուր փառասիրութիւնն է ծնունդ առել: ագռաները կտցահա-  
րում են այն ապերախտ աչքերը որ այնչափ բարիք էր վայե-  
լել Հերթը... ի... մն... է.....»

Եւ ծանրացած գլուխը յանկարծ ընկաւ կրծքի վրայ,  
մարմինի դիրքը թէքուեցաւ: Ես սարսափահար նախ յետ փա-  
խայ, ապա սիրտ առնելով թէկից բռնեցի և «Ի՞նչ եղաւ, ի՞նչ  
եղաւ» գոչեցի:

Յանկարծ ծերունին ոյժը հաւաքեց և խրոխտ դէմքով դար  
ձաւ ինձ.

— Ահա, վախեցար թէ մեռմյ. ոչ, ինձ նմանները այդպէս  
հեշտութեամբ չեն մեռնում...  
«Եսոր վանահայր եկաւ Մինչեւ նրա գալընկ նրա իշխանու-  
թեան ժամանակն իսկ մամոնայի արձան էի կանքնեցրել սրտիս  
այն խորշում, ուր Աստուծոյ սեղանը ջախջախուած ընկած էր և  
տէր ելեր գնացել էր:

«Երբ Հայոց նոր Մովսէսը աստուծային պատգամներով  
լեռնից իջնում էր, տեսաւ որ ես ոսկի հորթ կմ պաշտում.  
կամեցաւ ջախջախել արձանը և ոսկու հաշիւը պահաջել յօգուտ  
Տիրոջ սեղանի մոմի ու լինկի, զի վկայութեան սուրբ խորանի  
կալուածներէն էի գաղած: Բայց զղաման ոգին խոյս  
տուաւ ինձնից: Ես ոսկուն ապաւինեցի: գրկեցի զայն ու  
հեռացայ վանահօր իրաւասութիւնից: Սակայն ահեղ Մովսէսից

չնպատուեցայ. Նա ինձ ծովերի կղզիներումը բանդարկեց, մինչեւ որ Տիրոջ սեղանի բաժին ուկին յետ տայի: Բայց զղջման հուր չըրբորուեցաւ իմ հոգուս մէջ: Եւ մեռաւ վանահայրը, ես զուարթացած տարածեցի թևերս ոսկէ կուռքիս շուրջը, գրկեցի նրան աղատորէն և իմ առաջին աղօթքը նրա առջևսի անարագանը էր մեծագործ վանահօր սուրբ անուան: Ու անարգանը մեծ մարդու յիշատակին անպակաս եղաւ իմ շրթուքներից, մինչեւ որ վրէժինդրութեան անյազ ծարաւս մի ուրիշ անօրինակ զաղիր գործով յագեցուցի: Ա՞հ,... եռացէք, որդունք, եռացէք հոգուս ու մարմիս կաթօսայի մէջ, այս գեռ քիչ է ինձ համար:

—Մի բաժակ ջուր հասցրու, որդի, որ այս ուռած, ունենուած մարմիսս ուստող որդերին ջրնմ, որ հանդիսա տան ինձ խօսքս շարունակելու:

Ես ջուր բերելու վաղեցի: Նա խմեց մի մեծ թառսառը ջուր, շուռ եկաւ միւս կողքով յենուելու ծառին և շարունակեց —Սևաթոյը արարքներիս շատութիւնը և մահուան մօտենալու սարսուռը, որ փութացնում է հաշիւներս փակէլ արաշխարհի հետ, մոռացցութիւն ևն բերում վրաս: Մի տպեղ արարք, որ բարոյական հիւանդութեան դեղնութիւն է թափում կրօնաւորի վարուց վրայ, մոռացայ: Այստեղ յիշեմ.

«Մեծագործից յառաջ վանահայր էր մեր վանքին Աստուածաբանը: Փոքր ինձ գիւրաբորբոք, բայց անկեղծ, սրբասիրտ հովիւ, գթոտ և անյիշաչար հայր իւր զաւակաց: Նրա հայրական յանդիմանութիւնները, մեզ համար տարօրինակ երեցող վարումնքները, որոնք չէին կարող մնունդ տալ մեր փառասիրութեանը, կրօնաւորական առաքինութեանց ընտրելագոյն ծաղիկը՝ բարոյական հնագանդութիւնը խորշակահար տապալնցին մեր սրտում: Վանականներից ումանք մոռացան իրենց ուլստը. երդումը՝ Աստուծոյ և ժողովրդի առաջ հնագանդ լինել առաքինի վանահօր, ելաւ նրանց մտքէն: Ու բամբասանքի աղտոտ շրթունքներով վատարանել սկսան նրան, որ տէրն է և գլուխ ամեննեցուն, ընտրեալին Աստուծոյ և ազգի: Սրտերնին ատելութեան թանաքասման շինեցին ու գրիչն այնտեղ թաթիւելով ծաղրական ու անարգական պարսաւագրերով ժողովրդի և միամիտների սիրո գայթակղեցրին դէպի հովիւն արդար: Այս դեռ հերիք չէ: Երեք վանական «գոչեցին իրրկ զառիւծս» և ինեւագարեալ իրենց դիւական Ակումներէն «իրրկ զաւազակս բրօք ելին ի վերայ սրբոյն» նրան զանակոծ անելու: Այլ Տէրը խափանեց նրանց չար դիտաւորութիւնը և արդարի շէմքեցը դարձրեց յետ գլխիկոր չարագործներին:

«Մէկը նրանցից՝ որ «զչարաթոյն լեզուն զսրբովն ածէր» և խոնարհութեան Աւետարանն ու Խաչը մի կողմը նետած քիրն իւր թէկի տակն ունէր, այս անարդ անձս էր Ահա աշ-քիս յանդիման արձանանում է սուրբը։ Հայրական գութը դէմքին փայլում է որպէս լուսոյ ճառագայթ և ես կարծես թէ գեռ լսում եմ նրա ձայնը. «Ծղաքս, իմ զաւկներս էք. վնաս չո-նի, ինչ որ ըրեր էք, ես ձեր հալին եմ և պարտառը ձեզ ներե-լուս։ Ու սրբամնեալ շրթանց պահպանիչը»՝ իբրև ողորմութեան գուարթարար ցող տեղաց յանցաւորներիս քար սրտի վերայ։ Այն, յանցանքը ներուեցաւ, բայց տանջանքն ինձ միշտ բաժին մնաց, որովհետև ոչ մի գթութիւն և թողութիւն յանցանքի հետքը ջնջել կարող չէ գիտակցութեան միջից։

«Մեծագործ վանահօրը նուիրական սուրբ տեղերի հազն իւր ծոցն ընդունեց և ես ազատութեան առագաստ բանալով ծովկերի վրայ, կղղիների անձուկը թողի և մամոնաս զրկած յաղթական ընթացքով մեր վանքը մտայ։ Ակսում էր ինձ հա-մար մինոր յաղթական արշաւանք դէպի փառքը նոր վանահայր գարձաւ իմ բարերարս, ուսուցիչս և բարեկամս՝ Խոհականցը։ Նա ոչ թէ արդարութեան հրով մաքրեց ինձ իւր նախորդի մեղադրանքից մամոնասիրութեան մէջ, այլ գթութեան, ներո-ղամտութեան վրձինով պայծառ գունաւորեց ինձ վրայ ինսուց նստած և բիծը։ Նա ինձ աստիճանով բարձրացրեց, փառքով ճոխացրեց, ասպարիզում ինձ ձորակի ստուերից դէպի վեր հանեց և մրցակիցներիս գլուխը դրաւ։ Իսկ եմ.... ինչ, կամե-ցաց Յուղայի և Բրուտոսի դափնիները կորզել նրանց ապե-րախտ ճակատից և նրանով պսակ կապել այս պնարդ գլխիս։ Երբ նա ի Տէր հանգեաւ, ուրախական առաջին ճիչն արձա-կողը ես էի. Ո՞ն, անհունի շեմքում կարմրում եմ քո առա-ջին, որդի, զուն էիր որ արդար յանդգնութեամբ ու վշտից գեղ-նած արդար ծերունու մահուան վրայ, երեսիս ասացիր. «Բայց մի՛ մոռանաք, որ ձեր բարերարն էր.... երբ ես սադայէլեան ժամկատով աւետում էի բարերարիս մահը, ամենայն բարիք մոռացութեան տալով; Եւ ինչու՞ որովհետև նա կարմիր ժապա-ւէնի նշան չ'շնորհեց ինձ։

«Եեր այս երանելիները մահուան անոյշ նիրհով քնած են յաւիտեան, Կանէլ որ կենդանի են, լուսաւոր ու հերոս մար-դիկ, որոնց վրայ նախանձիս առատ թոյնից ցօղեցի, որոնց դէմ անարդ դաշնակցութեամբ որոգայթի ոստան հիւսեցի..... մի՛ մւը էք, արդեօք ինչ վիճակի մէջ, օտարութեան, ցուրտ

առանձնութեան դատապարտուած հերոսներ, հայրենի հողից խլուած ու կայենական ատելութեամբ հողմավար ընտիրներ, երանի թէ տեսնէի ձեզ ու ձեր առջև յաւիտենական այս սոսկալի ճանապարհի վրայ զղջան այրող արցունքներիս վեր- ջին կաթիւները քամէիւ երանի թէ մէկ էլ տեսնէիք ինձ կեն- դանի, նայէիք ձեր աչքերով իմ այս դաժան տանջանքերիս վրայ և զգայիք թէ արդար Տէրը որպէս վրէժինդիք եղաւ ձեզ համար: Գոնէ թող այդ լինէր ձեր սփոփանքը.....

Ծերունին խօսքի թելն ընդհատեց և յանկարծ երկու ափերով աչքերին խփելով ու դէմքը ծածկելով հեկեկաց սրտա- բեկ ձայնով: Արէւն արեն մայր մտնելու վրայ էր: Երեկոյեան զեփիւռը սարի կատարից դէպի դաշտերը սուլէլ սկսաւ: Ես մի պաղութիւն զգացի և յարմար առիթ համարեցի հիւանդ ծերունուն դէպի բնակարան հրաւիրել, մանաւանդ որ այս ան- վերջ տանջալից, խոցուսող զղջումն իմ սիրաս էլ տակն ու վրայ էր անում: Ես մի առիթ էի որոնում վերջ տալու:

— Սրբազն Տէր, ցուրտն սկսում է, խնդրում եմ ներս գնաք: Եւ մոտեցայ թել գրկեցի որ վերկենալու օգնեա: Նա լացից յետոյ լրել էր և նոյն դիրքով երեսը ծածկած մի ինքնա- մուացութեան թմրութեամբ արձանացել: Նա առանց մի խօսք տաելու վեր կացաւ կամնդնեց՝ նախ շուրջը նայեց՝ դէպի ձորակը, դէպի դաշտեր ու լեռներն աչք ածեց, ապա դէպի երկինք նայելով բեկրեկ ձայնով մէկ ռախ բաշեց ու յենուելով թերս վրայ դէպի ննջարանը քայլեց: Ես նրա լոգիկը հանեցի, օգնեցի պառկելու անկողնի մէջ և ինքս ինձ մտքումս ասացի: «Փառք Աստուծոյ, այլս զղջան սրտամաշ ձայն լսելու չեմ»:

Բայց ես յուսախարսեցայ: Նա նայեց սենեակի չորս կողմը, առաստաղին, և աչքերը սեսոելով պատի կիսաշէն վառարանի վրայ, յանկարծ դառն և ջղային մի ծիծաղ արձակեց:

— Գիտե՞ս, որդի, դարձաւ ինձ: Աւետարանի մի առակ միտքս եկաւ: մեծատան առակը և Աստուծոյ խօսքը: «Անմիտ», յայս զիշերի զողիդ ի քէն ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցերն ում լինիցիր: Եւ ում պիտի մնայ այս շէնքը: ոհ, երանի թէ արժանաւորներ լինէին վայելողները: Սակայն արդար է Աստուծած, նրա օրէնքը յաւետանական է: Այս շէնքի շաղախը ճակատս արդար քրտինքովը չէ շաղուած, այլ այլոց արցունքով: Անհունի շէմքում արտասուող որբն ու այրին, վանքն ու անապատ, տգէտ տիրացուն ու տէրտէր, որոնց մամոնայի գնով հովիւ կարգեցի կուսաւորչի հօտին,

մարմնացել կանգնել են երևակայութեանս մէջ, որ առաւել բորբոքեն հոգուս ու մարմնիս վէրքերը: Նրանք նայում են թէ ինչպէս եմ տառապում ևս այս սիրուն բնակարանում, ուր կամենում էլ ծերութեանս օրերում հանդիստ վայելել: Սակայն ես ինձ համար հոգու և սարմնի բանդ պարսպեցի, փշերով լցողն գերեզման շինեցի, ուր ի կենդանոյն տանջուում եմ եւ ռժում լինեցի»: արբեցող անարժան ազգակամններիս, որոնց թերութեան յանցանքներն իսկ դարձեալ իմ հոգուս վրա է ծանրանում:

— Սրբազն Տէր, Դուք մինչև իսկ այլոց պակասութեանց համար էլ տանջուում էք. միթէ այդ աստիճանի խստութեամբ խարազանել կարելի է անձը, Ներեցէք համարձակ խօսքիս: Դուք դէպի ձեր անձն անարդար խստութիւն էք գործ դնում: Ես կամեցայ այդ տանջող ինքնամտրակմանը վերջ տալու մի նոր փորձ անել:

— Սիալ ես երիտասարդ, այն հայելին որ կանգնած է իմ առջևս անհունի շէմքում և որի մէջ ես իմ ամբողջ կեանքս եմ տեսնում, ջինջ է ու վճիտ: Այստեղ հոգուս աչքով պարզ տեսնում եմ և իմ գործած յանցանքս, թէև մասսամբ անգիտակցական, դէպի ազգակամններս:

«Անա գերեզմանից յառել է կարծես ու կանգնել դիմացս իմ կիսակոյր հայրը, այս գիւղի քահանան: իւր պատառուտուն հանդերձը, երկշուր դէմքը, կրծքի վրա իւաշած ձեռները ինձ խոցոտող յանդիմանութիւն են կարդում: Այդպէս էր ներկայանում ինձ, երբ ես երիտասարդ էի և փառքի սին փայլով շլացած: Որդիւական ոչ մի պարտիք դէպի հայրս չեմ կատարել ես: Բայց մի կարծիք թէ ես Աւետարանի պատուիրանին հետեւով ուրացել, Ծողել էի հայր, մայր և Յիսուսի խաչն առել: ու միայն նրա ետևից գնացել, այդ պատճառով պարտքս դէպի հայրս շկատարեցի: Ո՞չ, Երանի այն կրօնաւորներին, որոնք գոնէ այդ վսիմ գաղափարով միայն ոգմուրուած մոռանում են իրենց պարտքս առ ծնողս: Ես ամաչում էի որ իմ փառքիս ու յառաջադիմութեանս տէր մի անձնաւորութիւն, այդքան խոսնարհ ծագում ունի, մի գեղջուկ խեղճ տէրաէրի որդի է: Ես ամաչում էի իմ ընկերներից, երբ հայրս մերթ ընդ մերթ ինձ տեսութեան էր գալիս: Նա երկար ու բարակ պիտի սպասէր խոհանոցում կամ բակի մի անկինում թագնուած մինչև ես հիւրներիս ճանապարհ դնէի և նրան ընդունէի: Նա մտնում էր ինձ մօտ դողդողալով, իմ անջրգեար սառնութիւնը դէպի նա-

մոռացնել էր տուել նրան որ ես նրա որդին եմ Նա ինձ ներկայանալիս միշտ երեակայում էր թէ ես իւր իշխանաւորն եմ Դիմքիս կնճիռները, սակաւախօսութիւնս ստիպում էին նրան որ շուտով խոյս տայ և իւր գիւղը յետ դառնայի: Եւ նա՛ իմ հարազատ հայրը խոհանոցում ծառայիս հետ իմ ճոխ ճաշի մնացորդներովը միայն յագեցնում էր իւր քաղցն ու իւր գիւղն էր գնում: Ես մոռացել էի կարծես Տիրոջ պատգամը. «Պատուեա գիայր քո և զմայր քո, զի բարի լինիցի քեզ»: Տիրոջ այս անսուտ հրամանին ունկնդիր չեղայ, արհամարհեցի և ահա իմ ծերութեանս մէջ, անհոնի շէմքում Տիրոջ միւս պատգամն իրում վաղորդայն ցող իմ զլիսիս իջաւ. «Անիծեալ որ անարգեսցէ դիայր իւր կամ զմայր»:

«Այս վարմունքիս համար էլ ես ցանածս առատօրէն հընձում եմ և ահա ինչպէս:

«Մասամբ դէպի հայրս ունեցած անպարտաճանաչութեան խղճի խայթից, որ նրա մահուանից յետոյ զգացի. մասամբ անձիս շուրջը փայլուն ծառաներ ունենալու տենչանքով, ես սկսայ փայփայել եղբարցս որդիներին: Նրանց համար անաշխատ կուտածս ոսկուց հետզհետէ բաց թողի, զուկեցի, զարդարեցի և այդ անկիրթ գոեհիներին ոսկու, արծաթի և կերպասների մէջ ծրարեցի: Իմ արածս բարութեան հիմքը մաքուր սիրոյ վրայ չէր դրուած, ուստի և իմ առերևոյթ բարեիքը որդ ու բոր գարձաւ ինձ համար ծերութեանս օրերում: Տարիների ընթացքում ձրիակերութեան վարժուեցան նրանք. աշխատասիրութեան ընձիւղները նրանց մէջ խորշահակար եղան: Մեծամտեցան, գուռզացան, զինետանց դններում և անբարոյականութեան գետնափորերում դեղերեցան ու անպիտանացան: Իսկ այժմ այս վիճակիս մէջ նրանք կողոպտեցին ինձ. կորպեցին վերջին դրամներս, բժշկելու հսարաւորութիւնից զրկեցին և այժմ նկուն եղէ ես քան զամենայն արարածս երկրի»:

«Իմ ծոցումս, իմ կրծքի վրայ տաքացած այդ սառած օձերն օրերով դուռ չեն բացանում վրաս. ոչ ոք է ինձ խղճում, ոչ ոք՝ յիշում իմ անցեալը: Այրուած, կոկած, ցամաք շրթունքներով առատօրէն ծծում եմ ապերախտութեան ծծմբահոտ ժանա թոյնը իբրև արդար հատուցումն իմ սկ ապերախտութեան, որը իմ մարմնաւոր ու հոգեոր ծնողներիս արբուցի:

«Ահա ինձ խնամող միակ արարածը, ինձ չափ անզօր այս ցամքած պառաւը՝ աւագ եղբօրս այրին, զաւակներից նախատուած այս կիսամեռ էակը, որ իմ հիւանդապահն է, ինձ կերակրողն ու ծառայովը:

«Տէ՛ր Աստուած բարի ու քաղցր մահ տայ սրան և իւր արքայութեանն արժանի անէ, ինձ՝ թշուառներից թշուառիս մատուցած իւր ծառայութեանց համար:

Այս խօսքերը լսելիս սենեկի հեռաւոր անկիւնում ծնկների վրայ յատակին նստած ցաւագար աչքերով մօտ եօթանասուն տարեկան փոքրահասակ, մէջքն իսպառ կորացած պառաւը խոնարհած գլուխը վեր բարձրացրեց, երեսը խաչնանեց երկիւղածութեամբ և կանացի անկեղծ սրտակոտոր հեկեկանքով լցրեց սենեակը: Լաց եղաւ և հիւանդը. ևս անկարող եղայ դիմանալ. այս լուս տեսարանը քարեր կ' շարժէր, ուր մնաց թէ մարդկային սիրտ:

Անվերջ զանգահարութիւնից ու գիւմումներից յետոյ վերջապէս տանից թէյ բերին մեր:

Ես մի վայրկեան դուրս ելայ: Ժամի 8-ն էր արդէն: Բուլորած լուսինը վեր ելաւ: Եղբօրս գաայ հարեւան սենեկում —եղբայր, ձիերը պատրաստիր, մենք պիտի վնանք: —Գիշելն այստեղ չես մնում, հարցրեց եղբայրս զարացած:

—Զէ, եղբայր, ևս այնպիսի ծանր տպաւորութեան տակ իմ որ արտեղ ոչ քնել, ոչ հանգիստ լինել կարողեմ: Իսկ գիւլերը հրաշալի է:

Եղբայրս ձիերը թագերելու գնաց. ևս վերադարձայ հիւան-դի մօտ: Նա թէյ էր խմում ախորժակով, ուսում էր հաց ու կարագ ազահաբար: Պատառի ետեկից պատառ պատրաստելով նա ինքն իրեն խօսեց. «այս խաւար ժամին, խաւար մարմնիս խաւար կերակուր տամ: Ահա, անյագ, անկշտում ստամոքս, առյ. կեր, յդիքացիր ուսիր ու ծաւալուիր, որ ստորերկրեայ ճի-ճուներին առատ պաշար տանես: Այո... և այդ ամէնը «ընդունայ-նութիւնէ և յօժարութիւն հոգւոյ»: Դարերի իմաստութիւն այս մշտակուր ծայնը չագեց իմ սրտի վրայ ցայսօր ժամանակի, միայն անհունի շէմքն է որ իմ ալեծուփ մտքիս առջև դրաւ այդ անսուտ ճշմարտութիւնը»:

Ծերունին հետզիտէ կարծես բարբոքուել էր ուզում: Ես սոսկացի այդ բանից և կամենալով վերջ դնել գնալուս համար խօսք բացի:

—Գիշեր է, այ որդի, այժմ չի կարելի գնալ. այս գիշեր այստեղ մնա,

—Ա. հայր, մօրս խօսք եմ տուած որ անպատճառ կ' վերադառնած. նա ամբողջ գիշերն անքուն աչքերով կ' լուսացնի. ինդում եմ ինձ արձակելու շնորհն անէք: Ես մօտիկ եմ: Աս-

տուծով շատ կտեսնուենք և յուսամ թէ ձեզ առողջացած տեսնեմ:

Նա ժպտաց և ասաց.

Աստուած այդ յօյսերդ արդարացնելու չէ, որդի, ոռովհետեւ ես արժանի չեմ: Բայց մօրդ տուած խոստումդ կատարել ես ուզում, այդ բացցը ու ազնիւ պարտը է, ես այլ ևս պնդելու խօսք չունիմ: Միայն դեռ ասելու բան ունիմ: Ես մի փոքր հոգեպէս հանգիստ եմ զգում ինձ այժմ, որ կեան քումս գործած դառնութիւնների գէթ աննշան մասը քո առջևդ թափեցի: Ներէ ինձ որ քեզ ցաւ և անախորժութիւն պատճառեցի: Այնուամենայնիւ դեռ ասելու բան ունիմ: Իմ վերջին խնդիրն ու մեղաւորիս հայրական խրատն էլ լսիր, որդի:

Ես նորից ուշադրութիւնս հաւաքեցի և պատրաստուեցի լսելու, երբ նա այսպէս սկսեց:

«Անհունի շէմքը կեանքի և մահուան թագաւորութեան միջավայրն է, սահմանն է նա այդ սահմանի վրայ կանգնած թէ անցած կեանքս եմ տեսնում և թէ մեռելոց աշխարհնը: Մեռելոց աշխարհի վրայից մէկ էլ աչքս դարձնելով գէպի աւս աշխարհը, որդեակ, իմ վերջին կամքս ու ինդիրս եմ յայտնելու քեզ, ապա ես այդ շէմքից ներս պիտի մտնեմ ու աչքերս ընդմիշտ փակեմ աստուծոյ չքնաղ դաստակերտի առաջ:

«Խօսք նախ քեզ եմ ուղղում, որդի: Դու այս հողի ու ջրի զաւակն ես, մեր թշուառ խղճուկ գաւառի ցաւերն ըմբըռնող որդին: Ես այս ժողովրդի համար ոչինչ չարի, թէկ հանգամանքներս, դիրքս, դրամս թոյլ էին տալիս ինձ: Ես զբազուած էի իմ անձով: Յաւիտենականութեան ճանապարհին միայն մտածեցի իմ ծննդավայրիս խարիսուլ եկեղեցին նորոգել: Դրամի մի մասը նախապէս տուի պատերը կիսով չափ շարեցին ու այնպէս մնաց: Դրամներս ձեռքիցս ելան և ես անզօր եղայ գէթ մի լրացած յիշատակ թողել այս աշխարհում երեկի Աստուած իմ զոհս երբէք չի ուզում ընդունել, որովհետև իմաստունն ասել է թէ յշշատակ ամբարշտաց շիջցի:

«Որդիակ իմ, որչափ ներեն կեանքիդ հանգամանքները գու սիրէ այս ժողովուրդը, այս հողն ու ջուրը, օգնէ մեր փառաւոր նախնեաց այս թշուառ մնացորդին խօսքով, դործով և ինչով կարող ես: Դիր ճակատդ արհաւիրքների առաջ ու մի վախենալ ծառայել քո հայրենիքիդ: Այդ քո բացցը պարտականութիւնն է, քո ճշմարիտ փառքն է: Ժողովուրդը քեզ կօրհնէ, քեզնով կոգեկորուի և երբ բարով խորին ծերութեան հասնիս, անհունի շէմքի այն կողմը վարդեր կբունեն քո առաջ

ու երանաւէտ խաղաղութեամբ կհրաբուրեն քեզ դէպի յաւի-  
տենականի ապարանքները:

«Երկրորդ՝ տար հրաժեշտիս ողջոյնը գերեզմանական  
կեանքիս բերանից իմ կրօնաւոր հարց ու եղբարցը տուր ու  
աղերսէ նրանց իմ տանջանքներս խրատ և օրինակ առնելով  
յարգին պաշտեն իրենց վանահօրը, ով կուզէ լինի նա: Ընտ-  
րութեան ժամանակ իւրաքանչիւր ոք ազատ է ըստ իւր խղճի  
մտաց կամեցածի համար աշխատել. բայց երբ ընտրուեցաւ  
Աստուծոյ օծեալը, նա սուրբ է, նրան միայն և միայն հազան  
դել և անձնուիրաբար ծառայել պէտք է: Եկեղեցու մէջ ան-  
պայման անձնուիրութիւն և հազանդութիւն մեծ վանահօր,  
տան մէջ անպայման յարգանք ու պատիւ ծնողաց, ահա այն երկու  
զօրութիւնները, որոնք Հայ ազգը շէն պահել կարող են:

«Երրորդ՝ երգուեցնում եմ քեզ հայ եկեղեցու և ազգի  
սիրովը, որ իմ հոգեկան տանջանքներիս նկարագիրը գրով ար-  
ձանացնես ի լուր Հայոց աշխարհի որպէս խրատ և զգուշու-  
թիւն մոլորեալ տիրապերթելոց: Ահա միակ ծառայութիւնը, որ  
կարող եմ անել անհունի շէմքում իս ազգին յիշատակիս նա-  
խատինքի գնով, ու խնդրէ որ աղօթեն ինձ համար գթու-  
թեամբ ներելով և ոչ արդարութեամբ դատելով:

«Այլ և. եթէ թաղմանս ժամանակ այս տեղերում լինիս  
մի զլանար գալ և իմ հողաբլիս վրայ մի քանի խօսք աղօթքով  
և գթութեամբ հիւսուած դամբանական ասել և խնդրել որ յու-  
ղարկաւոր ժողովուրդն աղօթէ ինձ համար»

Նա վերջացրեց: Ես վեր կացայ, արագապէս դուրս եխե-  
լով եղօրս ներս բերի և դիմեցի հիւսնդին.

— Սրբազն հայր, Աստուած ձեզ զեռ շատ երկար օրեր  
պարգևէ, ձեզ սրտի և հոգու անդորրութիւն շնորհէ: Սիրում  
եմ հաւատալ թէ դուք վերատին կառողջանաք և մենք դեռ շատ  
կտեսնուենք: Այսուամենայնիւ խնդրում եմ ձեզ օրհնեք եղօրս  
ու ինձ. մենք ձեր օրհնութեանը կարօտ ենք: Օրհնեցէք և իմ  
ծնողներին, որոնք այս քաղցր պարտք՝ Զեր օրհնութիւն  
խնդրելը իրբ պարտք մեզ վրայ դրին, երբ մենք այստեղ էինք  
գալիս:

Եւ մենք երկուսով ծունկ իջանք հիւանդ ծերունու ան-  
կողնի մօտ: Նա փոքր ինչ բարձրացաւ անկողնի մէջը նստեց.  
Երկու ձեռքը երկուսիս զլուխների վրայ դրաւ ու արտասուա-  
կալած աչքերով օրհնեց մեզ: Նրա օրհնութիւնն այն աստիճանի  
յուզիչ էր որ ես միայն լալ կարողացայ ու անկարող եղայ  
միտքս պահել նրա խօսքերը:

Մենք ոտքի ելանք, համբուրեցինք նրա օծեալ սուրբ աշջը և տամուկ աշքերով դուրս եկանք:

Սքանչելի գիշեր էր. լուսնկայ, պայծառ և խաղաղ. Տիեզերքի այս սքանչելի գեղեցկութիւնը ինչպէս սպեղանի մեղմացրեց հողուս վրայ նստած այն ծանր տանջող տպաւորութիւնը, որ հիւանդի բոցուա զզջումն էր թափել այնտեղ: Եղայրս իւր հրազենը պատրաստեց զգուշութեան համար և մենք զաշտակից իջնելով ձորը մտանք, Գիշերուայ ժամի 12-ն էր երբ մենք տուն հասանք: Բակը մտնելիս հօրս և մօրս անքուն աշքով սպասելիս զտանք գարպասի մեծ սալի վրայ նստած:

Որբան ուրախացան նրանք, երբ իմացան որ որբազան աէրը օրհնել էր մեզ:

Այս զէպքից մի շաբաթ յետոյ իմ իշխանութեան զլուխը ճանապարհորդութիւնից վերադառնալով, մեր գաւառից պիտի անցնէր: Պարտաւոր էի ընդ առաջ ենիկ նա անակնկալ կերպով ինձ հրամայեց հետևել իրեն մինչև իւր բնակավայրը, իլ նսար չունէի նոյն խալ իրերս տանից վիրցնելու և մօրս հրաժեշտալու զնալ: Հօրս՝ որ հետս էր, խնդրեցի որ մօրս հանգստացնէ և պատմէ յանկարծակոն հեռանալուս պատճառը: Տեղ հանելով իշխանութիւնս անմիջապէս նոր պաշտօնի զրաւինձ: Հէնց այդ ժամանակ լուր եկաւ թէ հիւանդ սրբազանը վախճանուել է: Ինձ թոյլ չտուին վերադառնալ և ններկայ լինել նրա թաղմանը: Ինչպէս լսեցի վանահայրը նրա թաղմանը արժանաւոր շուք և պատշաճաւորութիւն տալու համար բազմաթիւ բարձրաստիճան անձինք էր դրկեր: Թաղումից յետոյ ես դիպուածով պատահեցի յուղարկաւորներից մէկին և խնդրեցի պատմել ինձ սրբազանի կեանքի վերջին բոպէները ինչ որ լսել էր և թաղումը:

«Ուրբաթ օր երեկոյեան էր երբ մենք հասանք ննջեցեալի զիւղը, սկսեց նաւ այդ օր սոսաւոտեան էլ նա վախճանուել էր: Որոշած էլուք շաբաթ օրը կեղեցի տանել, իսկ կիւրակէ վերջին օժման կարգը կառաւած և թաղել նկեղեցին զեռ շինուած չէր, ուրեմն և ոչաւորադ անել անհնար: Սակայն այդ անհնարին եղաւ. Նրա դին զար լի կերպով լուծուել էր: Այդ սոսկալի չափով ուրած, ցած և արճնհոս մարմնին մօտենալու հնար չկար: Ոչ ոք կարող էր մօտիկ կանգնել նրան: Գաւառից հաւաքուած ժողովուրդն անզամ անկարող եղաւ մօտենալ և նրա աջը համբուրել: Միակ եկն էր փութալ հողին լանձնել: Նոյն երեկոյ լուսնեակ գիշերով թաղման կարգ կա-

տարեցինք, որքան կարողացանք և նրան տարանք հողը դրինք գիւղի եկեղեցու արևելեան պատի մօտ «Որքան տխուր և տարօրինակ էր նրա թաղումը, նոյնքան սոսկալի են եղել նրա վերջին բոպէները, Նրա եղբօրորդին այսպէս նկարագրեց մեզ: «Վերջին երեք օրը մենք սոսկան մէջ էինք, Նրա աննկարագրելի ուռոյցը մինչև վիզն էր հասել: Մարմնից ջուրը քաշուում էր ուղղակի: Նա գիտակցութիւնը կորցրել էր, բայց ոյժը ոչ: Անկողնից վեր էր կենում ու սոսկալի գոռում-գոչումներով սենեկի մէջը շըր-ջում էր, բռունցքներով ահեղ հարուածներ տալիս պատերին դուրս նետուել ուզում: Երկու երեք հոգով հազիւ կարողանում էինք նրան բռնութեամբ անկողին դնել, երբորդ օրը նրա տանջանքները գագաթնակէտին հասան և սոսկալի վախճանն արագացրին: Նա ոտքի ելաւ. սկսաւ գոռալ, գոչել «Տէր Գաբրիել, փողերս տուր, փողերս բեր ինձ բժշկել տուր, փողերս, փողերս...» Ապա սկսաւ կոռւփներ տեղալ մարմնին, խածուել թերը և հուսկ յետոյ մի զարիուրելի աղաղակով նա ձեռքերը գցեց իւր փորոտիքը, եղունգներով պատառուեց, աղիքները վար թափեց և նրանց կոյտի վրայ ընկաւ ու վերջին շունչը տուաւ»:

«Ահա այն ամէնը, ինչոր պատմեց ինձ հանգուցեալի եղ-բօրորդին»:

Սուրբ վանահայրը նրու մահուան նկարագիրը լսելով սաստիկ զգացուել էր և կարգադրել վանքումը պատարագ անել, հոգեհանգիստ կատարել ու միաբերան աղօթելնրա հոգու խաղաղութեան և մեղաց թողութեան համար:

ՊԱՏՐԻԿ